Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները ,դասղեկ Արմիկ Հարությունյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջկցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1.2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքները, դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:
2.Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը:
3.Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- .2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Արմիկ Հարությունյանը, ով ներկայացրեց 2017-2018 ուստարում 10-րդ <<Ա>> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքները: Արմիկ Հարությունյանը առաջարկեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել ծնողական խորհուրդ:

Որոշեցին.

1.Նախագահի թեկնածու առաջադրել և վերահաստատելՌուզաննա Պետրոսյանին,
2.Հայարփի Սարգսյան/ անդամ/
3.Անահիտ Հայրապետյան /անդամ/
4.Ալիսա Ասատրյան /անդամ/
5.Գայանե Անտոնյան /անդամ/

2. Լսեցին.- Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը: Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ՝ Արմիկ Հարությունյանը նշեց,որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների

դաստիարակության հիմնախնդիրների հարցում:.Դասղեկը հորդորեց ծնողներին՝ սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ,ինչը կխթանի ճիշտ ու արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ,նշված ժամկետում սկսել և ավարտել դասագրքերի վարձավճարները:

Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարները ,հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:.Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը կատարել ժամանակին՝ համապատասխան ցուցակով:

3.Լսեցին.-Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ՝ Արմիկ Հարությունյանը նշեց ,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին հետևել,որ իրենց երեխաներին հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Պետք է առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը, չնայած նրան, որ այս դասարանում կարգապահության հետ խնդիրներ մինչ այժմ չեն եղել:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Ռուզաննա Պետրոսյան

Քարտուղար՝ / Անահիտ Հայրապետյան